

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԵՎ ԼՂՀ ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ՇՐՋԱՆԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՓՈԽԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ Լոռու մարզի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մարտակերտի շրջանի միջև բարեկամական կապերը սաղմնավորվել են դեռևս 2008 թվականից: Հետագա տարիների այցելությունները, իրականացվող համատեղ ծրագրերը վկայում են, որ երկու մարզերի միջև բարեկամությունը տարեցտարի առավել խոր արմատներ է ձգում ու շարունակվելու է երկար տարիներ:

Ծրագրի շրջանակներում Լոռու մարզն ու Արցախի Մարտակերտի շրջանն արդեն մի քանի տարի իրականացնում են «Լոռի-Մարտակերտ. բարեկամության կամուրջներ»՝ խորագրով պատվիրակությունների փոխայցելություններ, մշակութային, սպորտային, մարդասիրական և այլ միջոցառումներ: Ծրագրի շրջանակներում Մարտակերտի բնակչությանը Լոռու մարզի բժիշկների կողմից մատուցվում են անվճար բժշկական ծառայություններ: Մարտակերտի դպրոցականները իրենց ամառային հանդիստն են անցկացնում Վանաձորի «Ծիծեռնակ» ճամբարում:

Այսպես, 2012թ. հուլիսի 28-29-ին Հայաստանի Հանրապետության մարզերի և Արցախի Հանրապետության վարչական շրջանների միջև տնտեսական և մշակութային կապերի խորացման ծրագրի շրջանակներում տեղի է ունեցել Լոռու մարզի պատվիրակության հերթական այցը Արցախի Հանրապետություն: Պատվիրակությանը, որի կազմում էին մարզային տարբեր կազմակերպությունների ղեկավարներ, մտավորականության ներկայացուցիչներ, «Վալլեքս» խմբի՝ Հայաստանում գործող ընկերությունների աշխատակիցներ, ՀՀ Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանի գլխավորությամբ, ընդունել է Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը: Քննարկվել են նաև երկու հայկական պետությունների կենսագործունեության տարբեր ոլորտներին առնչվող մի շարք հարցեր: Նախագահի մոտ պաշտոնական ընդունելությանը հաջորդել է Ստեփանակերտի մշակույթի կենտրոնում լուսնիների ու արցախցի արվեստագետների մասնակցությամբ համատեղ միջոցառում, որին ներկա են գտնվել ԼՂՀ վարչապետը և մշակույթի նախարարը: Այդ այցելության ժամանակ ՀՀ Լոռու մարզի գեղանկարիչների մի քանի բարձրարժեք կտավներ են նվիրվել Ստեփանակերտի պետական պատկերասրահին: Մարզի պատվիրակությունը Մարտակերտի վարչական շրջանի ղեկավարությանն է նվիրել սերմացուի զտիչ-ախտահանիչ սարքավորում, ինչպես նաև, դպրոցական գրականություն և Վանաձորի գեղագիտական կենտրոնի սաների աշխատանքներ:

2013թ. հունիսի 27-29-ը Լոռու մարզպետ Ա. Նալբանդյանի գլխավորությամբ կազմակերպվել է հերթական այցելությունն Արցախ: Այցը համընկել է Մարտակերտի ազատագրման 20-րդ տարելիցին նվիրված տոնակատարությունների հետ: Ա. Նալբանդյանը պատվիրակության մի քանի անդամների հետ մասնակցել է Մարտակերտի ազատագրման 20-րդ տարելիցին նվիրված միջոցառումներին:

2014թ. սեպտեմբերի 20-22-ին Լոռու մարզի պատվիրակությունը հերթական այցով ԼՂՀ-ում էր: Մարզի պատվիրակությունն այս անգամ նպատակադրվել էր ՀՀ Անկախության 23-րդ տարելիցը տոնել արցախցի հայրենակիցների հետ: Այցի

շրջանակներում պատվիրակության մի քանի անդամներ Արթուր Նալբանդյանի գլխավորությամբ հանդիպում ունեցան ԼՂՀ Ազգային Ժողովի նախագահ Աշոտ Ղուլյանի հետ: Պատվիրակության անդամները հանդիպում են ունեցել նաև Մարտակերտի վարչական շրջանի վարչակազմի անդամների հետ: Քննարկվել են փոխհարաբերությունների սերտացման անհրաժեշտության հետ կապված կոնկրետ հարցեր: Երկուստեք կարևորել են փոխայցելություններն ու գործակցությունը նաև երկու վարչական շրջանների կրթօջախների, մշակութային օջախների միջև: Պայմանավորվածություն է ձեռք բերվել «Բեյզ մեթլս» ընկերության աջակցությամբ այս ուղղությամբ գործնական քայլեր ձեռնարկել: Համակարգիչներ են նվիրվել Մարտակերտի վարչական շրջանին՝ ըստ անհրաժեշտության տնօրինելու համար: